

**Նունե Զոմարդյան**  
*ԵՄՀ իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ*  
Էլ. հասցե՝ nune.jomardyan@eiu.am  
DOI: 10.53614/18294952-2022.1-19

## **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հիմնվելով համեմատական սահմանադրական իրավունքի գիտության մեջ առկա տեսությունների, ինչպես նաև միջազգային և ներպետական մակարդակներում ձևավորված դատական պրակտիկայի վրա՝ սույն հոդվածում քննարկվում է սոցիալական իրավունքների սահմանադրականացման հիմնախնդիրը: Չնայած առկա իրարամերժ մոտեցումներին ու տարածայնություններին՝ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սոցիալական իրավունքների պաշտպանության վերաբերյալ առկա են սահմանադրական կարգավորման մի շարք ընդունելի կառուցակարգեր: Վերլուծելով դատական սահմանադրական վերահսկողության ուժեղ և թույլ ձևերը՝ հեղինակը ընդգծում է թույլ կամ երկխոսության դատական վերահսկողության կարևորությունը սոցիալական իրավունքների պաշտպանության գործում: Հոդվածում ներկայացվում են իրավական պաշտպանության թույլ միջոցների առավել քննարկվող չորս նմուշօրինակների առավելություններն ու թերությունները: Ուսումնասիրությունների հիման վրա հեղինակն առաջարկում է ՀՀ Սահմանադրության 3-րդ գլխում գետեղված սոցիալական իրավունքները, որոնք ամրագրված են որպես օրենսդրական երաշխիքներ և քաղաքական նպատակներ, ապահովել պաշտպանության հատուկ ռեժիմով՝ հիմնվելով դատական սահմանադրական թույլ վերահսկողության վրա: Հեղինակը գտնում է, որ, որպես թույլ վերահսկողության տարբերակներ, կարող են դիտարկվել «ողջամտության չափանիշ»-ի կամ խառը (թույլ և ուժեղ, հիբրիդ) սահմանադրա-

կան վերահսկողության նմուշօրինակները՝ կախված պետության առջև ծառայած քաղաքական խնդիրներից:

**Հիմնաբառեր.** վերահսկողություն, սոցիալական իրավունքներ, ուժեղ, թույլ, ողջամտության չափանիշ, երկխոսության տեսություն:

## Ներածություն

Համաշխարհայնացումը, տեխնոլոգիական զարգացումները, վերջին տարիների տնտեսական, սոցիալական և բնապահպանական ճգնաժամերը կրկին ակտիվ քննարկումներ են ծավալում սոցիալական ոլորտի զարգացման, հատկապես՝ սոցիալական իրավունքների դերի, գործառույթների, միջազգային և ներպետական իրավական այլ չափանիշների հետ նրանց կապի վերաբերյալ: Նոր մոտեցումների լույսի ներքո պետություններին առաջարկվում է օրենսդրական մակարդակում երաշխավորել համընդհանուր սոցիալական պաշտպանություն յուրաքանչյուրի համար ողջ կյանքի ընթացքում: Հայեցակարգային նման մոտեցումը գիտական քննարկումների առարկա է դարձնում սոցիալական իրավունքների սահմանադրականացման խնդիրը: Հարցն այն է, որ պետությունների սահմանադրություններն այդ իրավունքների նկատմամբ դրսևորում են տարբեր մոտեցումներ: Դրանք ամրագրվում են որպես անհատական իրավունքներ կամ որպես քաղաքական նպատակներ: Երկրորդ՝ գերիշխող մոտեցման դեպքում այդ իրավունքները տարբերվում են քաղաքացիական և քաղաքական իրավունքներից, որպես կանոն չունեն անմիջական գործողություն, հանդիսանում են սոցիալական ոլորտի երաշխիքներ և չեն առաջացնում մարդու և քաղաքացու համար սուբյեկտիվ իրավունքներ: Սոցիալական իրավունքների ծավալը և բովանդակությունը որոշվում է գերազանցապես օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից:

Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը ևս որդեգրեց հայեցակարգային այս մոտեցումը: Սոցիալական որոշ իրավունքներ սահմանազատվեցին հիմնական իրավունքներից, ամրագրվեցին Սահմանադրության 3-րդ գլխում որպես օրենսդրական երաշխիքներ և քաղաքական նպատակներ: Դա նշանակում է, որ վերջիններս չեն առաջացնում հանրային սուբյեկտիվ իրավունքներ և կարող են իրագործվել ու ենթակա լինել դատական պաշտպանության միայն այն բանից հետո, երբ դրանց բովանդակությունն ու ծավալը կհստակեցվի օրենքով (Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, 2016, էջ 39-40):

Բայցևայնպես, սոցիալական իրավունքների սահմանադրականացման հարցը վերջին տասնամյակներին զարգացում է ապրել ինչպես միջազգային, այնպես էլ՝ ներպետական մակարդակներում: Դրա վառ օրինակներից են «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 2008թ. դեկտեմբերի 10-ին ընդունված կամընտիր արձա-

նագրությունը, 1995թ.նոյեմբերի 9-ին ընդունված և 1998թ. ուժի մեջ մտած կոլեկտիվ բողոքների ընթացակարգի վերաբերյալ Եվրոպական սոցիալական խարտիայի լրացուցիչ արձանագրությունը, ինչպես նաև՝ նոր սերնդի սահմանադրություններում ամրագրված սոցիալական իրավունքներն ու հատկապես մի շարք երկրների սահմանադրական դատարանների պրակտիկան: Այս զարգացումները ցույց են տալիս, որ սոցիալական իրավունքների պաշտպանությունը, այդ թվում՝ անձի բնականոն զարգացման ու սոցիալական ներառման համար անհրաժեշտ նվազագույն պայմանների երաշխավորումը, նրա ողջ կյանքի ընթացքում պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով սահմանադրական կարգավորման ընդունելի նոր մոտեցումները:

Սույն հոդվածի նպատակն է սոցիալական իրավունքների սահմանադրականացման հարցի վերաբերյալ իրավաբան տեսաբանների կարծիքների և տարբեր երկրների դատական պրակտիկայի ուսումնասիրությունների հիման վրա դուրս բերել առավել շրջանառվող հայեցակարգային մոտեցումները և առաջարկել նշված իրավունքների սահմանադրականացման հնարավոր զարգացումների ուղիները Հայաստանի Հանրապետությունում:

## Մեթոդ

Ուսումնասիրությունն իրականացվել է թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետների և տարբեր երկրների Սահմանադրական դատարանների պրակտիկայի ուսումնասիրության իրավահամեմատական մեթոդի հիման վրա: Սոցիալական իրավունքների սահմանադրականացմանն ուղղված հայեցակարգային մոտեցումների վերլուծության, տեսական դիրքորոշումների վերաիմաստավորման ուղիների նախանշման համար կիրառվել է նաև կառուցողական քննադատության մեթոդը:

## Սոցիալական իրավունքների ոլորտում սահմանադրական վերահսկողության հնարավորությունները

Ինչպես արդեն նշել ենք, աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները կրկին առաջ են քաշում քննարկումներ ժամանակակից հասարակության սոցիալական կառուցվածքի վերաբերյալ: Եթե տարիներ առաջ իրավաբան գիտնականներից շատ քչերն էին հետաքրքրված քաղաքական տնտեսագիտության, սոցիալական իրավունքների, հավասարության պահանջների և հանրային ու մասնավոր իրավունքի միջև իրավական կարգավորման փոխկապակցված կառուցակարգերով, ապա ներկայումս իրավիճակն այլ է: Այժմ սոցիալական իրավունքների կարգավիճակի և գործառույթի, ազգային և միջազգային իրավական այլ չափանիշների հետ դրանց փոխհարաբերությունների վերաբերյալ բուռն քննարկումների հետ մեկտեղ հարցադրումներ են արվում առ այն՝ կարո՞ղ է արդյոք սոցիալական իրավունքների իրավական պաշտպանությունն ապահովել արդյունավետ սոցիալական պաշտպանվածություն ժամանակակից ժողովրդավարական պետություններում (O'Conneide, 2021, էջ 1), ինչ չափով պետք է ժողովրդավարական երկրներում գործող

օրենսդրությամբ ամրագրված սոցիալական իրավունքները վերափոխվեն սահմանադրական իրավունքների, ինչ ձև պետք է ունենան այդ դրույթները, և ինչպիսի՞ն պետք է լինի դատարանների դերը տվյալ իրավունքների իրականացման գործում (Wesson, 2012, էջ 221):

Այս հարցերը զգալի ուշադրության են արժանացել համեմատական սահմանադրական գիտության կողմից, և, չնայած տեսության մեջ ու պրակտիկայում առկա իրարամերժ մոտեցումներին ու տարաձայնություններին, մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սոցիալական իրավունքների պաշտպանության վերաբերյալ առկա են սահմանադրական կարգավորման մի շարք ընդունելի կառուցակարգեր: Մարկ Տուշնետը, անդրադառնալով դատական համակարգի դերին սոցիալական և տնտեսական իրավունքների ապահովման գործում, ընդգծում է, որ «քննարկումներն այն մասին, թե «արդյո՞ք Սահմանադրությունները պետք է ներառեն նման իրավունքներ, և արդյո՞ք այդ իրավունքները, եթե ներառվեն, պետք է ապահովվեն դատական պաշտպանությամբ, ավարտվել են: Ոչ թե «արդյո՞ք», այլ «ինչպե՞ս»: սա է այն հարցը, որին այժմ բախվում են լուրջ գիտնականներն ու դատավորները» (Tushnet, 2012):

Այս տեսակետից ժամանակակից իրավաբանական խոսույթում (դիսկուրսում) քննարկվում են սահմանադրական վերահսկողության ուժեղ և թույլ տեսակները<sup>1</sup>, որոնց համապատասխան էլ առանձնացնում են սոցիալական իրավունքների իրավական պաշտպանության «ուժեղ» և «թույլ» միջոցները (Roach, 2019, էջ 866) : «ուժեղ միջոցները» պարտադիր որոշումներ են, որոնք սահմանում են «կոնկրետ ժամկետներ» և «մանրամասն բացատրում», թե ինչ պետք է անեն պետական պաշտոնյաները: «Թույլ միջոցները», ինչպիսիք են հռչակագրերը կամ պահանջները, առաջարկում են կառավարությանը մշակել ծրագրեր, որոնք խրախուսում են «բանակցություններ վարել կողմերի միջև ծրագրի ավելի մանրամասն ուրվագծերի շուրջ» (Tushnet, 2004, էջեր 248–251):

Թույլ վերահսկողությունը դիտարկվում է երկխոսության տեսությունների լույսի ներքո: Այս տեսություններն ընդգծում են սահմանադրական հարցերի շուրջ դատական և իշխանության մյուս (քաղաքական) ճյուղերի միջև կարծիքների համատեղ փոխանակման կարևորությունը: Դատական վերանայման միջոցով դատարանները նախաձեռնում են քննարկումներ, իսկ վերջին խոսքը տրվում է քաղաքական իշխանություններին: Երկխոսության տեսությունների կողմնակիցները հիմնականում հանդես են գալիս դատական և իշխանության մյուս երկու ճյուղերի միջև սահմանադրական ուժերի որոշակի հավասարակշռության օգտին՝ ընդդեմ դրանցից մեկի գերակայության:

Կողմնակից լինելով սահմանադրական ուժեղ վերահսկողությանը՝ միևնույն ժամանակ գտնում ենք, որ երկխոսության տեսությունները կարող են իրենց դրական ազդեցությունն ունենալ սոցիալական իրավունքների սահմանադրականացման համար: Այս տեսակետից սոցիալական իրավունքների

1 Սույն հոդվածում սահմանադրական վերահսկողության ձևերն ուսումնասիրվում են ոչ թե ընդհանրապես, այլ այնքանով, որքանով որ առնչվում են սոցիալական իրավունքների հետ:

սահմանադրականացմանը վերաբերող առավել քննարկվող մոտեցումները մենք բաժանել ենք 4 մոտեցումների:

**Առաջին** մոտեցումը հիմնվում է «ողջամտության չափանիշ»-ի վրա, որն իրականացվում է թույլ սահմանադրական վերահսկողության միջոցով: Այստեղ հատկապես աչքի է ընկնում Հարավաֆրիկյան Հանրապետության Սահմանադրական դատարանի պրակտիկան:

«Գրուբում»-ի գործում տուժողները, ապրելով սարսափելի պայմաններում, ապօրինաբար զավթել էին էժան բնակարանների համար նախատեսված մասնավոր տարածք, սակայն վտարվել էին այդտեղից և մնացել անօթևան: Նրանք խնդրում էին դատարանին պահանջել Կառավարությունից ապահովել իրենց համապատասխան ժամանակավոր կացարաններով մինչև մշտական բնակարան ստանալը: Սահմանադրական դատարանն, անդրադառնալով այդ խնդրին, նշել է, որ պետությունը պարտավոր է պոզիտիվ քայլեր ձեռնարկել ծայրահեղ աղքատության, անօթևանության կամ անընդունելի բնակարանային պայմաններում ապրողների կարիքները բավարարելու համար, քանի որ «ձեռնարկվելիք միջոցառումների ճշգրիտ ուրվագծումն ու բովանդակության սահմանումը նախևառաջ օրենսդիր և գործադիր իշխանությունների խնդիրն է» (Government of the Republic of South Africa v Grootboom, 2001, (1) SA 41 (CC)):

Դատարանի համար կարևոր էր պարզել՝ արդյո՞ք պետության կողմից ձեռնարկված օրենսդրական և այլ միջոցները ողջամիտ էին: Դա պայմանավորված էր նրանով, որ միայն բնակարանաշինության պետական ծրագրի առկայությունը դեռ բավարար չէր պետության պարտավորությունները կատարված համարելու համար (պարագրաֆներ 39, 42): Անհրաժեշտ էր, որ պետիկ այդ ծրագիրն իրականացվեր ողջամիտ սահմաններում: Այս տեսակետից Սահմանադրական դատարանը բնակարանաշինության պետական ծրագիրը համարեց անհիմն այնքանով, որքանով համարժեք աջակցություն չէր ցուցաբերվում անապահով խավին:

Դա նշանակում է, որ ողջամտությունը պահանջում է, որպեսզի անապահով խավերի համար ծրագրերի մշակումն ու ներդնումը, ինչպես նաև դրանց իրագործման ճշգրիտ ձևերի ու շրջանակի սահմանումն իրականացվի պետության կողմից<sup>2</sup>: Այն նաև խորացնում է պետական իշխանության հաշվետվողականությունը՝ միաժամանակ չդնելով դատարաններին առաջնային որոշումներ կայացնողների դիրքում (Wesson, 2012, էջ 237): Այսինքն՝ ողջամտության չափանիշը հնարավորություն է տալիս Սահմանադրական դատարանին իրականացնելու թույլ սահմանադրական վերահսկողություն, որի որոշումները ձևական իրավական տեսանկյունից վերջնական չեն (Tushnet, 2003, էջ 2782) և կարող են վերանայվել քաղաքական իշխանությունների կողմից: Նման վերահսկողությունը երկխոսության պայմաններ է ստեղծում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի միջև (Tushnet, 2019, էջ 807), ինչպես նաև հնարավորություն է տալիս կառավարությանը մշակել

2 Խոսայի (Xhosa) գործով Դատարանը ողջամտության չափանիշի մեջ ընդգրկել էր նաև համաչափության չափը (Xhosa v Minister of Social Development 2004 (6) SA 505 (CC)):

համակարգային բարեփոխումներ՝ նվազագույնի հասցնելու առանձին խախտումների կրկնությունը (Roach, 2019, էջ 861):

Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ Դատարանը «Գրուբբում»-ի գործում մերժեց «անհրաժեշտ նվազագույնի» (minimum core) մոտեցման կիրառումը, ինչը թույլ կտար բոլոր կարիքավորներին ձեռք բերել օգնություն պահանջելու իրավունք: Դատարանը համարեց, որ ինքը չուներ բավարար հնարավորություններ «անհրաժեշտ նվազագույնի» բովանդակությունը որոշելու համար:

Նմանաբովանդակ դիրքորոշում էր արտահայտվել նաև «Բուժման գործողությունների արշավ» (Treatment Action Campaign) գործի շրջանակներում, որտեղ Դատարանը վերահաստատել էր «անհրաժեշտ նվազագույնի» հարցի քննարկման անընդունելիությունը՝ գտնելով, որ դատարանները չունենին ստիտուցիոնալ հիմք իրականացնելու լայնածավալ փաստական և քաղաքական հետաքննություններ՝ որոշելու, թե որոնք պետք է լինեն նվազագույնի բովանդակային չափանիշները (Minister of Health v Treatment Action Campaign 2002 (5) SA 721 (CC), պարագրաֆ 37):

Փաստորեն, Դատարանը նշված գործերում չկիրառեց իրավական պաշտպանության անհատական միջոցներ կարիքավորների համար: Ըստ Մարկ Տուշնետի, դա պայմանավորված էր նրանով, որ իրավական պաշտպանության թույլ միջոցները չեն կարող լինել «անհատական և տվյալ պահի համար»: Դրանք պահանջում են պետությունից մշակել այնպիսի ծրագրեր, որոնք խոստանում են վերացնել խախտումը, իսկ երբ դա արվում է, դատարանը համարում է հարցը լուծված (Tushnet, 2004, էջեր 1895, 1910):

Բայցևայնպես, հետագա գործերում Սահմանադրական դատարանն ընդունեց որոշումներ, որոնցում դրսևորեց երկկողմանի մոտեցում հատկապես բնակարանային հարցերին վերաբերող գործերում (Roach, 2019, էջ 861)<sup>3</sup>: Այն մի կողմից տրամադրեց անհապաղ անձնական պաշտպանություն վտարումից, իսկ մյուս կողմից՝ կիրառեց իրավական պաշտպանության առավել թույլ և հարգալից միջոցներ, որոնք հնարավորություն տվեցին գործադիրին տուժողների հետ կառուցողական խորհրդակցություններ անցկացնելուց հետո մշակել բնակարանային խնդիրների կարգավորմանն ուղղված համակարգային իրավական պաշտպանության միջոցներ (Mbazira, 2011, էջեր 72-74): Այսպիսով՝ Հարավաֆրիկյան Հանրապետության Սահմանադրական դատարանը, սահմանադրական վերահսկողության հարցում առաջությունը տալով իշխանության թևերի միջև երկխոսության սկզբունքին, ձգտում է կիրառել նաև անհատական պաշտպանության միջոցներ, որոնք հիմնականում ունեն ժամանակավոր բնույթ:

Հարավաֆրիկյան Սահմանադրական դատարանի սոցիալական իրավունքների վերաբերյալ որոշումները մեծ ուշադրության են արժանացել տարբեր պետությունների և միջազգային կառույցների կողմից: Կաս Սանսթեյնը բարձր է գնահատել «Գրուբբումի» որոշումը՝ որպես «նոր և չափազանց խոստումնալից մոտեցում սոցիալական և տնտեսական իրավունքներ»

րի պաշտպանության համար» (Cass, 2002, էջ 232): Մալկոլմ Լանգֆորդն առաջարկել է Հունգարիայի Սահմանադրական դատարանին օգտագործել ողջամտության վերանայման մոդելը սոցիալական իրավունքների բոլոր տեսանկյունների համար: (Langford, 2009, էջ 266): Հիմք ընդունելով Հարավաֆրիկյան նախադեպային իրավունքը՝ Մեծ Բրիտանիայի Մարդու իրավունքների համատեղ կոմիտեն (JCHR) կողմ է արտահայտվել սոցիալական իրավունքների դատական պաշտպանությանն ուղղված ողջամիտ մոտեցմանը (Joint Committee on Human Rights, 2007, բաժին 5) : «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը ևս նախատեսում է ողջամտության չափանիշի փորձարկում (Griffey, 2011, էջ 275):

Այնուամենայնիվ, ողջամտության չափանիշը ենթարկվում է նաև որոշ քննադատությունների առ այն, որ ողջամտությունը պատշաճ կերպով չի պաշտպանում սոցիալական իրավունքները: Մի խումբ փորձագետների կարծիքով այն անորոշ է, ինչը թույլ չի տալիս սոցիալական իրավունքների կրողներին վստահորեն պնդել, որ իրենց իրավունքները խախտվել են: Մյուսներն էլ գտնում են, որ ողջամտությունը չի տալիս բավարար առաջնահերթություն նրանց, ովքեր գտնվում են վատթարագույն վիճակում կամ ում կարիքներն առավել հրատապ են: Ըստ էության, փաստարկն այն է, որ ողջամտությունը սպառնում է սպառել սոցիալական իրավունքների հիմնական բովանդակությունը և վերածել դրանք գուտ ընթացակարգային պահանջների (Wesson, 2012, էջ 237):

Սոցիալական իրավունքների պաշտպանության **երկրորդ** մոտեցումը հիմնվում է «անհրաժեշտ նվազագույնի» նմուշօրինակի (մոդելի) վրա, որն իրականացվում է ուժեղ սահմանադրական վերահսկողության միջոցով: Այստեղ գերակշռում են անհատական պահանջները: Տվյալ խմբում աչքի է ընկնում Կոլումբիայի և Բրազիլիայի դատարանների պրակտիկան:

Կոլումբիայի Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ սոցիալական իրավունքների սահմանադրական ճանաչումը պահանջում է, որ պետությունն առնվազն մշակի և ընդունի նշված իրավունքների իրականացման գործողությունների ծրագիր: Բայցևայնպես, ըստ Սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքի, որոշակի հանգամանքներում սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքները կարող են ուղղակիորեն կիրառվել դատարանների կողմից պաշտպանիչ դատական հրամանի (acción de tutela) միջոցով<sup>4</sup>: Օրինակ, բացառիկ դեպքերում սոցիալական ապահովության իրավունքը դադարում է ծրագրային դրույթ լինելուց և կարող է կիրառվել անմիջապես՝ անհատական սկզբունքով: Դա տեղի է ունենում, երբ մարդիկ գտնվում են «բացահայտ խոցելիության» (debilidad manifiesta) վիճակում, և առկա է նրանց իրավունքների անհապաղ պաշտպանության անհրաժեշտություն՝ կանխելու համար վերջիններիս արժանապատիվ գո-

<sup>4</sup> Նման դատական հրաման կարող է ներկայացնել ցանկացած անձ, ում «հիմնարար սահմանադրական իրավունքները» վտանգված են կամ ոտնահարվել են պետական իշխանության որևէ մարմնի գործողությունների կամ անգործության հետևանքով, ինչի արդյունքում դատարան է ներկայացվում անհապաղ պաշտպանության պահանջ (Sepúlveda, 2009, էջ 146):

յության վտանգը: Նման իրավիճակներում Դատարանը պարտավորեցնում է պետությանն անհապաղ կատարել սոցիալական օգնություն տրամադրելու իր պարտավորությունը: 1992թ. շրջադարձային ձանաչված որոշման մեջ Դատարանն ընդգծեց, որ 63-ամյա տղամարդը, որն ապրում էր բացարձակ աղքատության մեջ և չէր շփվում իր ընտանիքի հետ, պետք է տնտեսական աջակցություն ստանար, որպեսզի կարողանար աչքի վիրահատության ենթարկվել տեսողությունը վերականգնելու համար (Corte Constitucional, T-533/1992):

Կոլումբիայի սահմանադրական դատարանը նմանատիպ մոտեցում ցուցաբերեց նաև առողջության իրավունքի նկատմամբ: Ըստ Դատարանի, չնայած այն հանգամանքին, որ տվյալ իրավունքը համարվում է զարգացող իրավունք, այն կարող է անմիջական իրավական ձևակերպում ստանալ այնտեղ, որտեղ կապ կա այնպիսի հիմնական իրավունքի հետ, ինչպիսիք են կյանքի իրավունքը, արժանապատվությունը և ֆիզիկական անձեռնմխելիությունը: Այս հիմքով Դատարանը մի քանի դեպքերում պարտավորեցրել է սոցիալական ապահովության մարմիններին և մասնավոր առողջապահական ծառայություններ մատուցողներին բուժում տրամադրել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդներին (Sepúlveda, 2009, էջ 153):

Նմանատիպ ընդլայնված մոտեցում է որդեգրվել նաև Բրազիլիայի Դաշնային գերագույն դատարանի կողմից սահմանադրության համաձայն առողջության իրավունքին վերաբերող վեճերի քննության ընթացքում: 1990-ականների վերջում Դաշնային գերագույն դատարանը սահմանեց, որ «Առողջության իրավունքը...հանդիսանում է կյանքի իրավունքի անքակտելի սահմանադրական հետևանքը...Ծրագրային նորմի մեկնաբանումը չի կարող այն վերածել անատամ սահմանադրական խոստման... Սահմանադրությամբ երաշխավորված կյանքի անձեռնմխելիության իրավունքի և այդ իրավունքի հետ կապված ֆինանսական և պետության երկրորդական շահերի միջև ընտրության դեպքում էթիկայի և իրավունքի նորմերը դատավորին պարտադրում են ընտրության միայն մեկ հնարավոր տարբերակ՝ անսասան հարգանք կյանքի նկատմամբ» (Supremo Tribunal Federal, 2000):

Այս որոշման արդյունքում առաջ եկան մեծ թվով բուժում (հիմնականում դեղեր) պահանջող անհատական դիմումներ, որոնց մեծ մասը հանգեցնում էր գործերն ի օգուտ դիմումատուների լուծմանը: Առողջության իրավունքի հետ կապված դատական գործերը 1990-ականների վերջին, ՄԻԱՎ / ՁԻԱՀ-ի դեպքերից բացի, տարածվեցին նաև բազմաթիվ այլ ոլորտների, ներառյալ շաքարախտի, Պարկինսոնի հիվանդության, Ալցհեյմերի հիվանդության, հեպատիտ C-ի և բազմակի սկլերոզի վրա (Ferraz, 2009, էջ 35):

Ինչպես տեսնում ենք, Կոլումբիայի Սահմանադրական դատարանի և Բրազիլիայի Դաշնային գերագույն դատարանի կողմից մշակված դատական պրակտիկան լայնորեն կիրառում է «անհրաժեշտ նվազագույնի» մոտեցումը, որի տեսանկյունից բոլոր հրատապ կարիքները բավարարվում են անմիջական անհատական իրավունքների շրջանակներում: Այս գործերում Դատարանը համատեղում է երկարաժամկետ և նախնական կառուցվածքային

պաշտպանության միջոցները առանձին դիմումատուներին առավել անհապաղ իրավական պաշտպանության միջոցներ տրամադրելու հետ:

Այնուամենայնիվ, այստեղ նույնպես առկա են որոշակի խնդիրներ, որոնց շարքում առավել աչքի է ընկնում դատարանների անտարբերությունն իրենց որոշումների ֆինանսական հետևանքների նկատմամբ: Մեկնաբանելով Կոլումբիայի Սահմանադրական դատարանի պրակտիկան՝ Սեպուլվեդան նշում է, որ «Կոլումբիայի Սահմանադրական դատարանի համար, երբ կյանքը վտանգի տակ է, առողջության իրավունքը ենթակա է դատական պաշտպանության, չնայած որ կարող են առաջանալ բյուջետային հարցեր՝ կապված այդ իրավունքի իրացման հետ» (Sepúlveda, 2009, էջ 154): Նմանապես, Ֆլավիա Պիովեսան նշում է, որ բրազիլական դատարանների որոշումները «նախապատվությունը տալիս են Սահմանադրությամբ երաշխավորված կյանքի իրավունքին՝ որպես անքակտելի սուբյեկտիվ իրավունքի, այլ ոչ թե պետության ֆինանսական կամ այլ երկրորդական շահերին» (Piovesan, 2009, էջեր 182, 185):

Ըստ Մյուրեյ Ուեսսոնի նմանատիպ մոտեցման առաջնային դժվարությունը կայանում է նրանում, որ սոցիալական իրավունքներն ուղղակիորեն սահմանափակված են ռեսուրսների առկայությանը՝ առնվազն սոցիալական իրավունքները խթանելու և իրականացնելու պարտավորության առումով: Հետևաբար, սոցիալական իրավունքներին վերաբերող որոշումների հետևանքները ռեսուրսների տեսանկյունից չպետք է դիտվեն որպես անտարբեր վերաբերմունք: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ իրականում ռեսուրսներն անսահմանափակ չեն (Wesson, 2012, էջ 244):

Յունգի կարծիքով կենտրոնացումը սոցիալական իրավունքների ծավալի և բովանդակության որոշման վրա ռիսկային է, քանի որ այն, ինչը պետությունը պետք է որոշի որպես նվազագույն, կարող է ստորին շեմից վերածվել առավելագույն շեմի (Young, 2008, էջեր 13-175):

Դրան հակառակ՝ Կոլմ Օ՛Մինեյդը «անհրաժեշտ նվազագույնի» վերլուծության առավելությունը տեսնում է նրանում, որ այն կենտրոնանում է առանձին անհատների պոզիտիվ իրավունքների վրա, կարող է տրամադրել ավելի հստակ նորմատիվային ուղեցույց դատարաններին և այլ իրավապահ մարմիններին իրենց վերահսկողական գործառնությունների իրականացման վերաբերյալ, ինչպես նաև էլ ավելի շատ սահմանումներ տալ այնպիսի բաց չափանիշներին, ինչպիսիք են «ողջամտությունը» կամ «համաչափությունը» (O’Cinneide, 2021, էջեր 10-11):

Սոցիալական իրավունքների դատական պաշտպանության **երրորդ** մոտեցումը կապվում է մարդու արժանապատվության հետ, որի հիման վրա իրականացվում է խառը (թույլ-ուժեղ) կամ հիբրիդ սահմանադրական վերահսկողություն: Նմուշօրինակը ձևավորվել է Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի 2010թ. փետրվարի 9-ին ընդունված «Հարց IV»-ի (Աշխատաշուկայում ժամանակակից ծառայությունների մասին չորրորդ օրենքի) որոշման հիման վրա:

«Հարց IV»-ը միավորում էր գործազրկության և սոցիալական աջակցությո-

յան նպաստները Սոցիալական օրենսգրքի նորաստեղծ երկրորդ հատորում և հանդես էր գալիս որպես միասնական հիմնական նպաստ՝ հիմնված աշխատունակ անձանց ու նրանց հետ համատեղ ապրող անձանց կարիքավորության աստիճանի վրա: Սակայն մեծահասակների և մինչև 14 տարեկան երեխաների համար նախատեսված գոյատևման միջոցների ապահովման հիմնական նպաստն առաջացրեց դժգոհություններ և բողոքներ:

Տվյալ գործով Դաշնային սահմանադրական դատարանը իր որոշման մեջ, զուգորդելով ԳԴՀ Հիմնական օրենքի 1-ին հոդվածը Հիմնական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասում նշված սոցիալական պետության սկզբունքի հետ, ամրագրեց մարդու արժանապատիվ նվազագույն կենսաապահովման երաշխավորման հիմնական իրավունքը (Bundesverfassungsgericht, 2010): Այսինքն՝ ձևավորեց սահմանադրական իրավունք՝ օրենքով երաշխավորելու մարդու նվազագույն կենսապայմանները:

Կլաուդիա Բիթների բնութագրմամբ «Հարց IV» որոշումը դիտարկվում է որպես Սահմանադրական դատարանի կողմից օրենքով սահմանված պետական աջակցության սահմանադրական սոցիալ-տնտեսական իրավունքի հայեցակարգում (Bittner, 2010, էջ 1941-1942): Հարցն այն է, որ մինչ այդ Դաշնային Սահմանադրական դատարանի որոշումներում գրեթե վաթսուն տարի գերիշխում էր «կենսաապահովման նվազագույն մակարդակ ապահովելու պետության պարտականությունը, բայց ոչ անհատի իրավունքը»: Ըստ էության, պետության պարտականությունը՝ ապահովելու արժանապատիվ գոյության պայմաններ՝ հիմնված մարդկային արժանապատվությունը հարգելու պարտավորության վրա և զուգորդված սոցիալական պետության սկզբունքի հետ, նոր հայեցակարգ չէր: Զարգացող իրավասության լրացուցիչ քայլն այն էր, որ մարդկային արժանապատվությունը, ընկալվելով սոցիալական պետության սկզբունքի հետ միասին, կազմեց սուբյեկտիվ անհատական իրավունք, որն անհատին հնարավորություն էր տալիս օգտվել օրենքով սահմանված պետական նպաստներից: Յուրաքանչյուր կարիքավորի սոցիալ-տնտեսական իրավունքը պահանջեց, որ օրենսդրորեն ապահովվեն նյութական պայմաններ, որոնք անհրաժեշտ են ինչպես ֆիզիկական գոյության, այնպես էլ՝ սոցիալական, մշակութային և քաղաքական կյանքում նվազագույն մասնակցություն ունենալու համար (Bundesverfassungsgericht, 2010): Դրան համապատասխան, օրենսդիրը պետք է ընդուներ օրենք, որը կբավարարեր անհատի կենսաապահովման կարիքները (պարագրաֆներ 136-137): Գերմանիայի Հիմնական օրենքը չի սահմանում աջակցության ձգգրիտ չափը, որն էլ օրենսդրին ազատություն է տալիս ինքնուրույն սահմանելու հիմնական նպաստների չափը՝ հաշվի առնելով հասարակության վիճակը և կյանքի գերակշռող պայմանները (պարագրաֆ 138): Այսինքն՝ նվազագույն կենսամիջոցներ սահմանելու իրավասությունը պատկանում է օրենսդիր մարմնին: Միայն օրենսդիրը կարող է սահմանել սոցիալական ապահովության ծավալը, որոշել դրանց ձևերն ու չափը:

Դաշնային սահմանադրական դատարանը, հաշվի առնելով օրենսդրության ձկունությունը, նախ անդրադարձավ այն հարցին, թե արդյո՞ք կենսաա-

պահովման նվազագույն չափը «ակնհայտորեն անբավարար է», թե ոչ: Այնուհետև վերլուծեց գործընթացը, որով օրենսդիրը հաշվարկել էր հիմնական նպաստների չափը՝ ենթադրելով, որ սահմանադրորեն ընդունելի գործընթացով ընդունված որոշումը կհանգեցնի հիմնական արտոնությունների սահմանադրորեն ընդունելի դրույքաչափի:

Արդյունքում Դատարանը հակասահմանադրական ճանաչեց չափահասների և երեխաների ստանդարտ նպաստներին վերաբերող դրույթներն այն պատճառով, որ օրենսդիրը չէր իրականացրել վիճակագրության խորքային ուսումնասիրություն: Վերջինս նշեց, որ «Հարց IV» ակտն ընդունելիս օրենսդիրը առանձին էմպիրիկ ուսումնասիրություն իրականացնելու փոխարեն հենվել է «պատահական գնահատումների» վրա: Դատարանը որոշեց, որ թեև օրենսդիրն ունի հայեցողություն վիճակագրական մոդելների ընտրության հարցում, որոնք որոշում են, թե ինչպես են հաշվարկվում նպաստները, այդ հայեցողությունը պետք է կիրառվի հետևողական և թափանցիկ:

Նմանապես, Դաշնային սահմանադրական դատարանն ապաստան հայցողների նպաստների դեպքում որոշեց, որ ապաստան հայցողներին վճարվող դրամական աջակցության չափը չի համապատասխանում մարդկային արժանապատվության հիմնական սոցիալ-տնտեսական պահանջներին և օրենսդիրից պահանջեց վերանայել դրա համար հասանելի արտոնությունների չափը տվյալ խոցելի խմբի համար (Bundesverfassungsgericht, 2012):

Նշված որոշումները ցույց են տալիս, որ Դաշնային սահմանադրական դատարանը իր լիազորությունների շրջանակներում դրսևորել է ճկունություն օրենսդրական ակտերի սահմանադրականության հարցը քննարկելիս՝ գուցողելով թույլ-ուժեղ վերահսկողությունները: Մի կողմից, նպաստների չափը որոշելու հարցում դատարանը դրսևորել է մեծ հարգանք օրենսդիրի նկատմամբ և իրականացրել թույլ վերահսկողություն՝ անվանելով այն «ակնհայտ ձախողման վերանայում» (կետեր 132, 134, պարագրաֆ 80)<sup>5</sup>:

Մյուս կողմից դատարանը կիրառել է ավելի խիստ վերահսկողություն այն ընթացակարգերի և մեթոդների վերաբերյալ, որոնք օրենսդիրը կիրառում է ապրուստի գումարների ձգգրիտ չափը որոշելիս: Այն անդրադարձել է հետևյալ հարցերին. «... արդյո՞ք... օրենսդիրն ընտրել է հաշվարկման ընթացակարգ, որը հիմնովին հարմար է կենսաապահովման նվազագույնի գնահատմանը, արդյո՞ք... ամբողջությամբ և ճիշտ պարզել է անհրաժեշտ փաստերը և, վերջապես, արդյո՞ք օրենսդիրը տեղավորվել է իր կողմից ընտրված ընթացակարգի և նրա կառուցվածքային սկզբունքների շրջանակներում, որոնք արդարացված են հաշվարկի բոլոր փուլերում՝ հասկանալի թվերի շարքով (պարագրաֆ 143):

Այսպիսով, Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի վերը նշված որոշումները որոշակի հայեցողություն են տվել օրենսդիրին սոցիալական աջակցության համապատասխան ծավալը սահմանելու համար (թույլ

5 Վերահսկողության այս ինտենսիվությունը դատարանի կողմից հետագայում բնութագրվեց որպես «գուսպ» (պարագրաֆ 79) և «վերապահված» (կետեր 125, 175, պարագրաֆ 141): Հետևաբար, «արդյունքի վերաբերյալ նյութական վերանայումը սահմանափակվեց նրանով, թե արդյո՞ք օգուտներն ակնհայտորեն անբավարար են եղել»:

վերահսկողություն), բայց, այնուամենայնիվ, սահմանել են որոշակի չափանիշներ, որոնց շրջանակներում պետք է գործեր այդ հայեցողությունը, որոնք հիմնված էին Դատարանի մարդու արժանապատվության սկզբունքի սոցիալ-տնտեսական բովանդակության մեկնաբանության վրա (ուժեղ վերահսկողություն):

Մեթյու Կլաթը, վերլուծելով տվյալ որոշումները, նշում է, որ Դատարանը ձևավորում է հավասարակշռված մոտեցում, որը հնարավորություն է տալիս խուսափել և՛ չափից ուժեղ, և՛ շատ թույլ վերահսկողության խնդիրներից: Ըստ իրավագետի, օրենսդիր մարմնի և դատարանների իրավասությունների հակամարտությունը կարելի է լուծվել հավասարակշռման մեթոդով, որոնց օրինակները մեզ ցույց տվեց գերմանական դատարանը (Klatt, 2021, էջ 163):

Ինչ վերաբերում է իրավական պաշտպանության միջոցներին, ապա Դատարանը իր որոշման մեջ ոչ թե անհապաղ անվավեր ճանաչեց վիճարկվող նորմատիվ ակտը, որը կվերացներ բոլոր սոցիալական նպաստների օրենքով սահմանված հիմքը, այլ հայտարարեց, որ վերջինիս դրույթները անհամատեղելի են Հիմնական օրենքի հետ: Պաշտպանության այս միջոցը ուժի մեջ թողեց որոշմանը նախորդող ժամանակահատվածում ընդունված և քննության ընթացքում գտնվող գործերը՝ այդպիսով պաշտպանելով պետական բյուջեն հետադարձ վճարումների անորոշ ծախսերից: Մինչև ժամանակ օրենսդիր մարմնին ժամանակ տրվեց մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը Դատարանի կողմից մշակված դատավարական ցուցումների համաձայն անհրաժեշտ ուղղումներ կատարելու համար: Դատարանը նաև նշեց, որ այս հանձնարարականները ուշացնելու կամ չկատարելու դեպքում, ինչպես նաև ժամկետից հետո կատարված ցանկացած փոփոխություն հետադարձ ուժ կունենա, քանի որ պետությունը չպետք է օգուտ քաղի սահմանադրական խախտումներից՝ կարիքավորների հաշվին (Bundesverfassungsgericht, 2010, պարագրաֆ 220) :

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում սոցիալական իրավունքների **չորրորդ**<sup>6</sup> եվրոպական կոմիտեի<sup>6</sup> կողմից Եվրոպական սոցիալական խարտիայի դրույթների մեկնաբանման պրակտիկան: Այստեղ սոցիալական իրավունքների պաշտպանությունը կառուցված է «**էական (նյութական) բովանդակության**» **նմուշօրինակի** հիման վրա:

Ուսումնասիրությունների ընթացքում Կոմիտեն կիրառում է հայեցակարգային վերլուծությունները, Եվրոպայում ձևավորված պրակտիկան, ինչպես նաև՝ հեղինակավոր չափորոշիչները, օրինակ՝ Եվրոստատի տվյալները աղքատության մակարդակների վերաբերյալ: Այս աղբյուրներն օգնում են որոշել սոցիալական պաշտպանության այն չափը, որը պետությունները պարտավոր են տրամադրել անհատներին այնպիսի դրույթների համաձայն, ինչպիսին են օրինակ՝ Վերանայված սոցիալական խարտիայի 12-րդ հոդվածում ամրագրած սոցիալական ապահովության իրավունքը կամ 13-րդ հոդվածում

6 Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն ստեղծվել է Եվրոպական սոցիալական խարտիայի 25-րդ հոդվածով՝ վերահսկելու անդամ պետությունների կողմից կանոնադրության մեջ պարունակվող իրավունքների պահպանումը:

ամրագրված բժշկական և սոցիալական օգնության իրավունքը: Սակայն այս շեմերը հաճախ քննադատվում են կառավարությունների կողմից որպես չափազանց կոշտ, բայցևայնպես, դրանք սահմանում են հստակ ելակետային չափանիշներ<sup>7</sup>:

Կոմիտեի իրավական պրակտիկան պարտադիր չէ անդամ պետությունների համար, սակայն վերջինիս կողմից Սոցիալական խարտիայում ամրագրված իրավունքների մեկնաբանությունները հեղինակավոր են: Դա նշանակում է, որ ազգային իշխանությունները պետք է հաշվի առնեն այս իրավական պրակտիկան ներպետական օրենսդրություն և քաղաքականություն մշակելիս (նույնիսկ եթե այդ պարտավորությունը հաճախ անտեսվում է գործնականում):

Գնահատելով Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի գործունեությունը՝ Կոլմ Օ՛Մինեյդը նշում է, որ վերջինիս պրակտիկան և սոցիալ-տնտեսական իրավունքների ստանդարտների ձևակերպումը բովանդակային, այլ ոչ թե զուտ ընթացակարգային առումով, կարող է դիտարկվել որպես հնարավոր ձևանմուշ սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության պրակտիկայի հետագա զարգացման համար (O’Cinneide, 2021, էջ 12):

### **Սոցիալական իրավունքների իրացման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում**

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո սոցիալական իրավունքներն ուղղակիորեն ամրագրվեցին 1995թ. Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 2-րդ գլխում, իսկ սահմանադրական նորմերը ստացան անմիջական գործողություն: Մոտեցումը պայմանավորված էր ոչ թե կոնկրետ հայեցակարգով, այլ սոցիալական իրավունքների վերաբերյալ խորհրդային ժամանակներից եկող ընկալումներով, որի կառուցակարգերը սակայն չէին համապատասխանում տվյալ պայմաններին և պահանջներին: Սոցիալական իրավունքների ձևական (ֆորմալ) ամրագրումը հանգեցրեց նրան, որ դրանց սահմանադրականության հարցը շատ հազվադեպ քննարկվեց, իսկ դատական պրակտիկայում նախապատվությունը տրվեց սոցիալական իրավունքներն ամրագրող նորմատիվ ակտերի «սահմանադրականության կանխավարկածին՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ» (Բարսեղյան, 2018, էջ 72): 2005թ. սահմանադրական բարեփոխումներն այս հարցում էական առաջընթաց չարձանագրեցին:

Արմատական փոփոխություններ իրականացվեցին 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում: Ըստ նոր խմբագրությամբ Սահմանադրության՝ սոցիալական ոլորտին վերաբերող որոշ իրավունքներ դուրս բերվեցին հիմնական իրավունքների ու ազատությունների շարքից և դիտարկվեցին որպես օրենսդրական երաշխիքներ ու պետության քաղաքականության հիմնական նպատակներ: Հանրային իշխանությունն իր հերթին

7 Տե՛ս օրինակ՝ Եվրոպական գնչունների իրավունքների կենտրոնն (ERRC) ընդդեմ Բուլղարիայի գործը: Բողոք 48/2008, 18.02.2009թ.

սահմանափակվեց մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Այսինքն՝ որոշ սոցիալական իրավունքներ դուրս բերվեցին սահմանադրական իրավունքի կարգավիճակից, կորցրեցին հիմնական իրավունքների իրացմանն ու պաշտպանությանը բնորոշ առանձնահատկությունները և ամրագրվեցին որպես օբյեկտիվ-իրավական դրույթներ: Մոտեցումը հիմնավորվում էր նրանով, որ սոցիալական իրավունքների չտարբերակված ամրագրումը հիմնական իրավունքների ցանկում հարցականի տակ էր դնում սահմանադրի այն սկզբունքային որոշումը, ըստ որի՝ հիմնական իրավունքներն անմիջականորեն գործող իրավունք են, իսկ սոցիալական իրավունքների զգալի մասը սուբյեկտիվ իրավունքներ չի առաջացնում, և պարտավորեցնում է միայն օրենսդրին ու գործադիրին (Սահմանադրության փոփոխությունների նախագծի հիմնավորումներ, 2015):

Մենք, իհարկե, համամիտ ենք այն հետազոտողների հետ, որոնց կարծիքով մարդու սոցիալական իրավունքներին սահմանադրությամբ չի կարող տրամադրվել «դասական» իրավունքներին բնորոշ ամրագրման և պաշտպանության միևնույն ռեժիմը (օրինակ՝ Պողոսյան, Սարգսյան, 2015, էջ 41): Նրանք չեն կարող հիմնական իրավունքների նման նույն կերպ անմիջականորեն գործել, իսկ պետությունը չի կարող հավասար ձևով ապահովել դրանց իրականացումը: Բայցևայնպես, դա չի նշանակում, որ սոցիալական իրավունքները չեն կարող կամ չպետք է սահմանադրականացվեն: Պարզապես սոցիալական իրավունքների պաշտպանության ռեժիմը պետք է տարբերվի հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության ռեժիմից: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ հանրային իշխանությունն ուղղակի պարտավոր է կատարել սոցիալական իրավունքների իրացման ապահովմանն ուղղված իր պարտականությունները, իսկ պետության խնդիրն է սահմանադրորեն ամրագրել դրանց արդյունավետ իրացման կանոնակարգումները, անգամ, եթե վերջիններս սահմանվել են որպես նպատակներ: Այս տեսակետից Սահմանադրության 87-րդ հոդվածում ամրագրված Ազգային ժողովին Կառավարության տարեկան զեկույցի ներկայացումը որպես սոցիալական իրավունքների իրագործման միակ երաշխիք՝ անբավարար է:

Սոցիալական իրավունքների իրացման հարցում պետք է կարևորվի նաև օրենսդիր և դատական իշխանությունների դերակատարությունը: Սակայն, եթե օրենսդրի դերը սոցիալական իրավունքների գործադրման հարցում ակնհայտ է, ապա դատական իշխանության առումով առկա են որոշ տարակարծություններ: Խնդիրն այն է, որ հիմնական իրավունքների խախտման դեպքում անձը դիմում է Սահմանադրական դատարան՝ իրավունքի պաշտպանության պահանջով: Սոցիալական իրավունքների պարագայում առաջանում է վտանգ, որ Սահմանադրական դատարանը ստիպված պետք է լինի «ներքաշվել սոցիալական քաղաքականության հարցերի քննարկման մեջ և որոշում կայացնի այնպիսի հարցերի վերաբերյալ, որտեղ նա չունի ոչ որակավորում, ոչ ինստիտուցիոնալ լիազորություն և ոչ էլ քաղաքական բա-

վարար լեգիտիմություն» (Պողոսյան, Սարգսյան, 2015, էջ 42):

Հայեցակարգային նման մոտեցման արդյունքում անձը կորցնում Սահմանադրության 3-րդ գլխում ամրագրված աշխատանքային պայմանների (հոդվ. 82), սոցիալական ապահովության (հոդվ. 83), արժանապատիվ գոյության և նվազագույն աշխատավարձի (հոդվ. 84), առողջության պահպանության (հոդվ. 85) իրավունքների վերաբերյալ սահմանադրական պաշտպանություն իրականացնելու հնարավորությունը, իսկ զբաղվածության, բնակարանաշինության, ծնելիության, բնակչության առողջության պահպանության, հաշմանդամության կանխարգելման և մի շարք այլ խնդիրներ՝ որպես քաղաքական նպատակներ պետության համար կոնկրետ պարտականություններ չեն առաջացնում: Իհարկե, սոցիալական իրավունքներին վերաբերող բոլոր սահմանադրական դրույթները կարող են որպես չափորոշիչ օգտագործվել օրենքների սահմանադրականությունը գնահատելու համար, երբ պետական մարմինները վերացական վերահսկողության շրջանակներում դիմում են Սահմանադրական դատարան՝ վիճարկելու նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը (Պողոսյան, Սարգսյան, 2015, էջ 85), սակայն դա չեն կարող անել այդ իրավունքների անմիջական կրողներն ու մարդու իրավունքների պաշտպանը:

Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ Սահմանադրության 3-րդ գլխում թվարկված սոցիալական երաշխիքները (հոդվ. 82-85) սահմանադիրը նույնպես ձևակերպել է որպես իրավունքներ: Այսինքն՝ դրանց բովանդակությունն ավելին է, քան ուղղակի օրենսդրական երաշխիքների ամրագրումը: Դրա հետ մեկտեղ, նշված իրավունքներն անմիջականորեն բխում են սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված սկզբունքներից, հատկապես՝ սոցիալական պետության (հոդվ. 1), կայուն զարգացման (հոդվ. 12), մշակույթի, կրթության, գիտության խթանման (հոդվ. 15) և ընտանիքի պաշտպանության (հոդվ. 16) հարցերին վերաբերող դրույթներից: Փաստորեն, սոցիալական իրավունքների բովանդակությունը կանխորոշված է սահմանադրական կարգի սկզբունքներով և պետք է կոնկրետացնի սահմանադրության մյուս գլուխներում: Հետևաբար, ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ-ն սահմանված է որպես սոցիալական պետություն, առավել նպատակահարմար կլինի սահմանադրական փոփոխություններ կատարելիս Սահմանադրության 82-85 հոդվածները ամրագրվեն որպես իրավունքներ, ինչի արդյունքում էլ այդ հարաբերությունները օրենքներով կկարգավորվեն:

Բացի այդ, Սահմանադրության 83-րդ հոդվածում ամրագրված սոցիալական ապահովության իրավունքն ընդգրկում է նաև կենսաթոշակը: Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (օրինակ՝ Բուրդոլն ընդդեմ Ռուսաստանի գործը) ու ՀՀ Սահմանադրական դատարանի 2006թ. հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649 որոշման՝ կենսաթոշակը, սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, ճանաչվել է որպես սեփականության ձև և, որպես այդպիսին, ենթակա է սահմանադրական պաշտպանության: Հակառակ պարագայում խախտվում է Սահմանադրության 10-րդ հոդվածում ամրագրված սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանության սկզբունքը:

Ստեղծված պայմաններում անհրաժեշտ է նորովի գնահատել հանրային իշխանության կողմից սահմանադրական նպատակների իրացման գործընթացի վերահսկողությունն ու սոցիալական իրավունքների պաշտպանությունը: Արդյունավետ սահմանադրական վերահսկողություն իրականացնելու համար որպես օրինակ կարող են ծառայել դատական վերանայման երկխոսության նմուշօրինակները, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան վիճարկել ինչպես նորմատիվ իրավական ակտերի դրույթների սահմանադրականությունը, այնպես էլ՝ հանրային իշխանության մարմինների գործողություններն ու անգործությունը: Այս առումով առավել հետաքրքրություն կարող են ներկայացնել «Ողջամտության չափանիշ»-ի և խառը (թույլ-ուժեղ) կամ հիբրիդ սահմանադրական վերահսկողության նմուշօրինակները: Հիմնական խնդիրն այստեղ այն է, թե նշված նմուշօրինակներից որ մեկն ավելի ընդունելի կլինի Հայաստանի համար տվյալ ժամանակահատվածում:

«Ողջամտության չափանիշ»-ի նմուշօրինակի կիրառման դեպքում դատարանը հնարավորություն կունենա գնահատելու օրենսդրի և գործադիրի գործողություններն ու անգործությունը՝ մատնացույց անելով այն թերությունները, որոնք առկա են սոցիալական տվյալ ոլորտի քաղաքականության իրականացման մեջ: Սակայն այս դեպքում իշխանության նշված թևերը պարտավորված չեն լինի հետևել դատարանի որոշմանը, ինչը կարող է ոչ այդքան արդյունավետ լինել սահմանադրական ուժեղ վերահսկողության գոյության պայմաններում:

Մեր կարծիքով զարգացման ներկայիս փուլում Հայաստանի Հանրապետության համար առավել ընդունելի կարող է համարվել խառը սահմանադրական վերահսկողությունը: Այն հնարավորություն կտա մարդու արժանապատիվ նվազագույն կենսապայմանների երաշխավորման հիմնական իրավունքը շաղկապել սոցիալական պետության սկզբունքի հետ և ձևավորել սուբյեկտիվ անհատական իրավունք: Վերահսկողության խառը ձևը մի կողմից օրենսդրին կտրամադրի գործողությունների որոշակի ազատություն սոցիալական աջակցության պատշաճ մակարդակ սահմանելու գործում, իսկ մյուս կողմից կսահմանի մարդու արժանապատվության սկզբունքի հիմնական սոցիալ-տնտեսական բովանդակության վրա հիմնված որոշակի չափորոշիչներ, որոնց շրջանակներում կգործի այս հայեցողությունը: Նմուշօրինակը հնարավորություն կտա մարդկանց կոնկրետ գործի շրջանակում, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանին բողոքարկել նաև հանրային իշխանության գործողություններն ու անգործությունը կապված սոցիալական իրավունքների հետ:

Չպետք է անտեսվի նաև «էական (սյութական) բովանդակության» նմուշօրինակը, որը կարող է տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն և փորձ չափորոշիչների մշակման գործում:

Բայցևայնպես, իրավունքների դատական պաշտպանության նշված ձևերն ընդունելի դառնալու համար պետք է լուծեն որոշակի խնդիրներ՝

- դրանք պետք է գործեն այնպես, որ նվազագույնի հասցնեն սոցիա-

լական պաշտպանության վրա անցանկալի և չնախատեսված բացասական ազդեցությունները,

- սոցիալական իրավունքների պաշտպանությունը չպետք է խոչընդոտի հասարակության մեջ առկա քաղաքական բազմակարծությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ սոցիալական քաղաքականության վերաբերյալ հասարակական-քաղաքական ուժերը կարող են ունենալ տարբեր պատկերացումներ, մոտեցումներ ու կարծիքներ: Այս տեսակետից պետք է բավականաչափ տարածություն թողնվի ընտրական պայքարի և համաժողովրդական մոբիլիզացիայի համար՝ որոշելու սոցիալ-տնտեսական քաղաքականության ընդհանուր ուղղությունը և նոր հնարավորություններ ստեղծի խոցելի խմբերի հասարակական մասնակցության համար,
- սահմանադրական վերահսկողությունը պետք է ձգտի վերացնել անորոշությունները: Դա նշանակում է, որ վերանայման պրակտիկան պետք է իրական բովանդակություն հաղորդի սոցիալական իրավունքների ծավալին և բովանդակությանը՝ միաժամանակ ապահովելով սահմանադրական իրավունքներին վերաբերող դատաքննության բոլոր ձևերի համապատասխանությունը իրավունքի գերակայությանը, հատկապես այնպիսի արժեքներին, ինչպիսիք են՝ հստակությունը, հետևողականությունը և ներքին համաձայնեցվածությունը:

## Եզրակացություն

Անփոփելով վերոշարադրյալը կարող ենք նշել, որ ժամանակակից ժողովրդավարական պետություններում գնալով զարգացում է ստանում սոցիալական իրավունքների սահմանադրականացման գործընթացը: Մասնագիտական գրականությունում առավել քննարկվող հարցերից են սահմանադրական վերահսկողության ուժեղ և թույլ տեսակները: Թույլ վերահսկողությունը դիտարկվում է երկխոսության տեսությունների լույսի ներքո և, չնայած առկա իրարամերժ մոտեցումներին ու տարածայնություններին, երկխոսության տեսությունները կարող են իրենց դրական ազդեցությունն ունենալ սոցիալական իրավունքների սահմանադրականացման համար: Այս տեսակետից առավել քննարկվողներն են «ողջամտության չափանիշ»-ի, «անհրաժեշտ նվազագույնի», մարդու արժանապատվության վրա հիմնված խառը (թույլ-ուժեղ) կամ հիբրիդ և «էական (սյուրթական) բովանդակության» սնուշօրինակները:

Տվյալ մոտեցումներն ու նրանց շուրջ տարվող քննարկումները նոր հնարավորություններ են ստեղծում Հայաստանի Հանրապետությունում սոցիալական իրավունքների սահմանադրականացման համար:

## Օգտագործված գրականության ցանկ

Բարսեղյան, Ս. (2018) Սոցիալական իրավունքների իրացման առանձնահատկությունները սահմանադրական բարեփոխումների համատեքստում: // ԵՊՀ

- իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան: 1(1) 2018, էջեր 71-83:
- ՀՀ Սահմանադրություն: (ընդունված 1995թ. հուլիսի 5-ին՝ 2005թ. նոյեմբերի 27-ի և 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով):
- Սահմանադրության փոփոխությունների նախագծի հիմնավորումներ, 2015 <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=38271> (մուտք՝ 15.04.22)
- Պողոսյան, Վ., Սարգսյան, Ն. (2016) Հայաստանի Հանրապետության 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունը (համառոտ պարզաբանումներ), Եր.: «Տիգրան Մեծ» ՓԲԸ, էջ 42:
- Bittner, C. (2010). Human Dignity as a Matter of Legislative Consistency in an Ideal World: The fundamental right to guarantee a subsistence minimum in the German Federal Constitutional Court's judgment of 9 February 2010. (2011). Vol. 12, No. 11, *German Law Journal*, էջեր 1941-1960:
- Bundesverfassungsgericht [*Federal Constitutional Court*], 1 BVL 1/09, 1 BVL 3/09, 1 BVL 4/09 of 9 Feb. 2010 (*Hartz IV*). [http://www.bverfg.de/entscheidungen/ls20100209\\_1bvl000109en.html](http://www.bverfg.de/entscheidungen/ls20100209_1bvl000109en.html) (մուտք՝ 15.04.22)
- Bundesverfassungsgericht [*Federal Constitutional Court*], Judgment of the First Senate of 18 July 2012 – 1 BvL 10/10 – [http://www.bverfg.de/e/ls20120718\\_1bvl001010en.html](http://www.bverfg.de/e/ls20120718_1bvl001010en.html) (մուտք՝ 15.04.22)
- Cass R. Sunstein (2002). *Designing Democracy: What Constitutions Do*. Oxford: Oxford University Press, 1st edition (December 5, 2002)
- City of Johannesburg v Rand Properties (Pty) Ltd* 2007 1 SA 78 (W); 2006 6 BCLR 728 (W).
- Ferraz, O. L. (2009). The right to health in the courts of Brazil: worsening health inequities?. *Health and human rights*, 11(2), 33-45.
- Government of the Republic of South Africa v Grootboom* 2001 (1) SA 41 (CC).
- Griffey, B. (2011). The 'Reasonableness' Test: Assessing Violations of State Obligations under the Optional Protocol to the International Covenant on Economic, Social and Cultural Rights, *Human Rights Law Review*, Volume 11, Issue 2, June 2011, Pages 275-327, <https://doi.org/10.1093/hrlr/ngr012> (մուտք՝ 15.04.22)
- Joint Committee on Human Rights (JCHR), A Bill of Rights for the UK? *Twenty-Ninth Report, 2007/08*, 10 August 2008, available at: <http://www.publications.parliament.uk/pa/jt200708/jtselect/jtrights/165/16502.htm> (մուտք՝ 15.04.22)
- Khosa v Minister of Social Development*, 2004 (6) SA 505 (CC)
- Klatt, M. (2021). Positive Rights: Who Decides? Judicial Review in Balance. In book: *Proportionality, Balancing, and Rights*. Springer, էջ 163, DOI:10.1007/978-3-030-77321-2\_7 (մուտք՝ 15.04.22)
- Langford, M. (2009). Hungary: Social Rights or Market Redivivus? in *Social Rights Jurisprudence Langford. Emerging Trends in International and Comparative Law*, edited by Malcolm Langford, Cambridge University Press.
- Mbazira, C. (2011). Grootboom: A paradigm of individual remedies versus reasonable programmes. In *Southern African Public Law*, Vol. 26, No. 1 <https://hdl.handle.net/10520/EJC153216> (մուտք՝ 15.04.22)
- Minister of Health v Treatment Action Campaign* 2002 (5) SA 721 (CC).



- eyer 71–83: (In Arm.)
- HH Sahmanadrutyun [RA Constitution] (yndunvats 1995t. hulusi 5-in` 2005t'. noyemberi 27-i yev 2015t. dektemberi 6-I popokhutyunnerov): (In Arm.)
- Sahmanadrutyun popokhutyunneri nakhagtsi himnavorumner [Justifications of the Draft Constitution Amendments]*, 2015
- <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=38271> (accessed 15.04.22) (In Arm.)
- Poghosyan, V., Sargsyan, N. (2016) Hayastani Hanrapetutyun 2015 tvakani khmbagrutymb Sahmanadrutyuny (hamarrot parzabanumner) [Constitution of the Republic of Armenia in the version of 2015 (brief explanations)], Yer.: «Tigran Mets» P'BY, ej 42: (In Arm.)
- Bittner, C. (2010). Human Dignity as a Matter of Legislative Consistency in an Ideal World: The fundamental right to guarantee a subsistence minimum in the German Federal Constitutional Court's judgment of 9 February 2010. (2011). Vol. 12, No. 11, *German Law Journal*, էջեր 1941–1960: (accessed 15.04.22) (In Eng.)
- Bundesverfassungsgericht [Federal Constitutional Court]*, 1 BVL 1/09, 1 BVL 3/09, 1 BVL 4/09 of 9 Feb. 2010 (*Hartz IV*). [http://www.bverfg.de/entscheidungen/ls20100209\\_1bvl000109en.html](http://www.bverfg.de/entscheidungen/ls20100209_1bvl000109en.html) (accessed 15.04.22) (In Eng.)
- Bundesverfassungsgericht [Federal Constitutional Court]*, Judgment of the First Senate of 18 July 2012 – 1 BvL 10/10 – [http://www.bverfg.de/e/ls20120718\\_1bvl001010en.html](http://www.bverfg.de/e/ls20120718_1bvl001010en.html) (accessed 15.04.22) (In Eng.)
- Cass R. Sunstein (2002). *Designing Democracy: What Constitutions Do*. Oxford: Oxford University Press, 1st edition (December 5, 2002)(In Eng.)
- City of Johannesburg v Rand Properties (Pty) Ltd* 2007 1 SA 78 (W); 2006 6 BCLR 728 (W). (In Eng.)
- Ferraz, O. L. (2009). The right to health in the courts of Brazil: worsening health inequities?. *Health and human rights*, II(2), 33–45. (In Eng.)
- Government of the Republic of South Africa v Grootboom* 2001 (1) SA 41 (CC). (In Eng.)
- Griffey, B. (2011). The 'Reasonableness' Test: Assessing Violations of State Obligations under the Optional Protocol to the International Covenant on Economic, Social and Cultural Rights, *Human Rights Law Review*, Volume 11, Issue 2, June 2011, Pages 275–327, <https://doi.org/10.1093/hrlr/ngr012> (In Eng.)
- Joint Committee on Human Rights (JCHR), A Bill of Rights for the UK? *Twenty-Ninth Report, 2007/08*, 10 August 2008, available at: <http://www.publications.parliament.uk/pa/jt200708/jtselect/jtrights/165/16502.htm> (accessed 15.04.22) (In Eng.)
- Khosa v Minister of Social Development*, 2004 (6) SA 505 (CC) (In Eng.)
- Klatt, M. (2021). Positive Rights: Who Decides? Judicial Review in Balance. In book: *Proportionality, Balancing, and Rights*. Springer, էջ 163, DOI:10.1007/978-3-030-77321-2\_7 (accessed 15.04.22) (In Eng.)
- Langford, M. (2009). Hungary: Social Rights or Market Redivivus? in *Social Rights Jurisprudence Langford. Emerging Trends in International and Comparative Law*, edited by Malcolm Langford, Cambridge University Press. (In Eng.)
- Mbazira, C. (2011). Grootboom: A paradigm of individual remedies versus reasonable

- programmes. In *Southern African Public Law*, Vol. 26, No. 1 <https://hdl.handle.net/10520/EJC153216> (accessed 15.04.22) (In Eng.)
- Minister of Health v Treatment Action Campaign* 2002 (5) SA 721 (CC). (In Eng.)
- O’Cinneide, C.(2019).Giving Legal Substance to the Social Minimum.In:Kotkas, TandLeijten, IandPennings, F, (eds.)*Specifying and Securing a Social Minimum in the Battle Against Poverty*.(pp. 183–200). Hart Publishing: Oxford, UK.(In Eng.)
- Piovesan, F. (2009). Brazil: Impact and Challenges of Social Rights in the Courts. In M. Langford (Ed.),*Social Rights Jurisprudence: Emerging Trends in International and Comparative Law*, էջեր 182, 185. Cambridge: Cambridge University Press, doi:<https://doi.org/10.1017/CBO9780511815485.011> (accessed 15.04.22) (In Eng.)
- Port Elizabeth Municipality v Various Occupiers* (CCT 53/03), 2004 (12) BCLR 1268 (CC) (In Eng.)
- Roach, K. (2019). Dialogic remedies,*International Journal of Constitutional Law*, Volume 17, Issue 3, July 2019, Pages 860–883,<https://doi.org/10.1093/icon/moz056> (accessed 15.04.22) (In Eng.)
- Sepúlveda, M. (2009). Colombia: The Constitutional Court’s Role in Addressing Social Injustice. In M. Langford (Ed.),*Social Rights Jurisprudence: Emerging Trends in International and Comparative Law*. Cambridge: Cambridge University Press. էջ 146 <https://doi.org/10.1017/CBO9780511815485.009> (accessed 15.04.22) (In Eng.)
- Tushnet, M. (2004). Social welfare rights and the forms of judicial review’. *Texas Law Review*. Volume 82. Iss.7,pp. 1895–1919. (In Eng.)
- Tushnet, M. (2008). *Weak Courts, Strong Rights: Judicial Review and Social Welfare Rights in Comparative Constitutional Law*. Princeton University Press. (In Eng.)
- Tushnet, M. (2012). A Response to David Landau, *Opinio Juris Blog*, 23 January 2012, available at [http://opiniojuris.org/2012/01/23/hilj\\_tushnet-responds-to-landau/](http://opiniojuris.org/2012/01/23/hilj_tushnet-responds-to-landau/) (accessed 15.04.22) (In Eng.)
- Tushnet, M. (Aug., 2003). Alternative Forms of Judicial Review. In *Michigan Law Review*, Vol. 101, No. 8, <https://doi.org/10.2307/3595395> (accessed 15.04.22) (In Eng.)
- Tushnet, M. (July 2019). Weak-form review: An introduction. In *International Journal of Constitutional Law*, Volume 17, Issue 3, Oxford University Press and New York University School of Law. <https://doi.org/10.1093/icon/moz058> (accessed 15.04.22) (In Eng.)
- Wesson, M. (2012). Disagreement and the Constitutionalisation of Social Rights. In *Human Rights Law Review*. Published by Oxford University Press. 12:2, <https://doi.org/10.1093/hrlr/ngs010> (accessed 15.04.22) (In Eng.)
- Young, K. ‘The Minimum Core of Economic and Social Rights: A Concept in Search of Content’ (2008) 33 *Yale Journal of International Law* 113–175. (In Eng.)
- Corte Constitucional [Constitutional Court]*, Sentencia de revisión de tutela T-533/1992 <https://www.corteconstitucional.gov.co/relatoria/1992/t-533-92.htm> (accessed 15.04.22) (In Span.)
- Supremo Tribunal Federal-RE 271.286 AgR-RS [Federal Supreme Court] (2000) <https://redir.stf.jus.br/paginadorpub/paginador.jsp?docTP=AC&docID=335538> (accessed 15.04.22) (In Span.)

**Нуне Джомардян**

*Заместитель заведующего юридической кафедры  
Международного университета Евразия, соискатель кафедры  
Эл. адрес: nune.jomardyan@eiu.am*

## **ПРОБЛЕМА КОНСТИТУЦИОННОЙ ЗАЩИТЫ СОЦИАЛЬНЫХ ПРАВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

На основе существующих теорий в науке сравнительного конституционного права, а также в соответствии с судебной практикой, сложившейся на международном и внутригосударственном уровнях, в данной статье рассматривается вопрос конституционализации социальных прав. Несмотря на противоречивые подходы и разногласия, исследования показывают, что существует ряд приемлемых механизмов конституционного регулирования в области защиты данных прав. Анализируя сильные и слабые формы судебного конституционного контроля, автор подчеркивает важность слабого или диалогового судебного контроля в их защите. В статье представлены преимущества и недостатки четырех наиболее обсуждаемых видов слабой правовой защиты. На основании проведенных исследований автор предлагает обеспечить закрепленные в главе 3 Конституции РА в качестве законодательных гарантий и политических целей социальные права особым режимом защиты, основанным на слабом судебном конституционном контроле. Автор считает, что «критерий разумности» и смешанные (слабо-сильные, гибридные) модели конституционного контроля могут рассматриваться как наиболее приемлемые способы слабого контроля в зависимости от политических задач, стоящих перед государством.

**Ключевые слова:** контроль, социальные права, сильный, слабый, критерий разумности, теория диалога.

**Nune Jomardyan**

*Deputy Head of Law Department at Eurasia  
International University, Ph.D. student  
Email: nune.jomardyan@eiu.am*

## **THE ISSUE OF CONSTITUTIONAL PROTECTION OF SOCIAL RIGHTS IN THE REPUBLIC OF ARMENIA**

Based on the existing theories in the science of comparative constitutional law, as well as judicial practice formed at the international and domestic levels, this article discusses the issue of constitutionalization of social rights. Despite the controversial approaches and disagreements, the studies show that there are a number of acceptable structures of constitutional regulations regarding the

protection of social rights. Analyzing the strong and weak forms of judicial constitutional review, the author outlines the importance of weak or dialogic judicial remedies for social rights. The article presents the advantages and disadvantages of the four most discussed types of weak legal protection. Based on the studies, the author suggests that the social rights included in Chapter 3 of the RA Constitution, fixed as legislative guarantees and political goals, should be provided with a special regime of protection, based on weak judicial constitutional review. The author believes that the “reasonableness measure” or mixed (weak–strong, hybrid) constitutional review models can be considered as options for weak control, depending on the political problems faced by the State.

**Key words:** control, social rights, strong, weak, standard of reasonableness, dialogue theory.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2022թ. ապրիլի 25-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2022թ. մայիսի 3-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2022թ. մայիսի 10-ին: